ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- դեկտեմբերի 2019 թվականի №---Ա

ք. Երևան

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ «ԱՐԳԵԼ» ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՑ ԱՌԱՔՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԴԻՄԱՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) ուղղված 2019 թվականի սեպտեմբերի 4-ի №7/1-1880 գրությամբ հայտնել է «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) «Արգել» հիդրոէլեկտրակայանի (այսուհետ՝ Կայան)՝ վարձակալությամբ տրամադրված տարածքում մեկ այլ ընկերության կողմից Ընկերության սեփական կարիքների ծախսերի մեջ հաշվարկվող էլեկտրական էներգիայով կրիպտոարժույթի ստացման և թողարկման («մայնինգի») գործունեության իրականացման փաստի մասին,
2) հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը սույն թվականի սեպտեմբերի 6-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության 2019 թվականի սեպտեմբերի 4-ի №7/1-1880 գրությամբ բարձրացված հարցերի շրջանակում Ընկերության գործունեությունն «Էներգետիկայի մասին» օրենքին և Հանձնաժողովի իրավական ակտերին համապատասխանության ստուգման նպատակով,
3) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2019 թվականի սեպտեմբերի 13-ի №2/9-062 գրությամբ հայտնել է, որ Ընկերության և «ԷՅ ՍԻ ԷՄ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2018 թվականի ապրիլի 17-ին կնքվել է №ՍՊ-013 վարձակալության պայմանագիրը, ըստ որի՝ վերջինս Կայանի պահեստային շինության

տարածքում վարձակալել է 135.6 քմ մակերեսով տարածք։ Ընկերությունը պնդում է, որ «ԷՅ ՍԻ ԷՄ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Կայանում արտադրված էլեկտրական էներգիայի ուղիղ վաճառք չի իրականացվել, «ԷՅ ՍԻ ԷՄ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Կայանի սեփական կարիքների համար նախատեսված էլեկտրական էներգիայի օգտագործումը չի անդրադարձել Կայանի անվտանգ շահագործման վրա, և Ընկերությունը չի խախտել լիցենզիայի պայմանները։ «ԷՅ ՍԻ ԷՄ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել է Կայանի սեփական կարիքների վրա ծախսվող էլեկտրական էներգիան՝ ըստ տեղադրված հաշվառքի սարքի։ Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու խնդրանքով «ԷՅ ՍԻ ԷՄ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը և ստացել էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանները, սակայն անհետևողականության պատճառով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեխնիկական թույլտվությունը տրամադրվել է 2019 թվականի փետրվարի 6-ին և, հաշվի առնելով եղանակային պայմաններն ու անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման ուշացման հանգամանքը, առ այսօր «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հետ չի կնքվել էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր, ինչի հետևանքով «ԷՅ ՍԻ ԷՄ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չի վճարվել օգտագործված էլեկտրական էներգիայի արժեքը։ Ընկերությունը միաժամանակ հայտնել է նաև, որ սակագնի ձևավորման իր առաջարկում սեփական կարիքների վրա ծախսվող էլեկտրական էներգիայի քանակում չի ներառելու համապատասխան հաշվարկի մեջ արտացոլված էլեկտրական էներգիայի արտադրության քանակը, ինչպես նաև գումարը,

4) Հանձնաժողովի նախագահի 2019 թվականի սեպտեմբեր 23-ի և 2019 թվականի սեպտեմբերի 30-ի համապատասխանաբար № 761-ՀՆ և №777-ՀՆ հրամանների հիման վրա ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 26-ին և հոկտեմբերի 3-4-ին Ընկերության «Սևան», «Հրազդան», «Արգել», «Արզնի», «Քանաքեռ», «Երևանի ՀԷԿ-1», «Երևանի ՀԷԿ-3» հիդրոէլեկտրակայաններում իրականացվել է մոնիթորինգ, ինչի արդյունքում՝

ա. Կայանի պատվարի տարածքում հայտնաբերվել է սեփական կարիքների տրանսֆորմատորի ցածր լարման շղթայից էլեկտրասնվող, պատվարի սահմաններից դուրս եկող մեկ ուղղություն, որի համար ենթակայանի շենքում տեղադրված է եղել

էլեկտրական էներգիայի հաշվառքի թվով մեկ սարք (ըստ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի հոկտեմբերի 9-ի №ՍԱ/34.4-Մ4-2/2823-19 գրության՝ նշված ուղղությամբ սահմանված կարգով ձևակերպված է բաժանորդ): «ԷՅ ՍԻ ԷՄ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը գործել է Կայանի պահեստների մասնաշենքում, որն այցելության օրերին փակ է եղել: Պահեստների մասնաշենքում էլեկտրական էներգիան մատակարարվել է սեփական կարիքների 0.4կՎ ցանցից,

բ. «Արզնի» հիդրոէլեկտրակայանի ՍԿՏ-4 ենթակայանում հայտնաբերվել են տրանսֆորմատորի ցածր լարման շղթայից միացված յոթ ուղղություններ, որոնց համար ենթակայանում տեղադրված են եղել հաշվառքի թվով ութ սարքեր (ըստ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի հոկտեմբերի 9-ի №ՍԱ/34.4-Մ4-2/2823-19 գրության՝ նշված ուղղություններով սահմանված կարգով ձևակերպված են բաժանորդներ, իսկ մի ուղղությամբ տեղադրված է վերստուգիչ): «Արզնի» հիդրոէլեկտրակայանի տարածքում սեփական կարիքների էլեկտրական ցանցից միացված այլ սպառողներ կամ սպառիչներ չեն հայտնաբերվել,

գ. «Երևանի ՀԷԿ-3» հիդրոէլեկտրակայանի տարածքում սեփական կարիքների տրասֆորմատորի ցածր լարման շղթայից էլեկտրասնվել է հիդրոէլեկտրակայանի սահմաններից դուրս եկող մեկ ուղղություն՝ մեկ հաշվառքի սարքով (ըստ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի հոկտեմբերի 9-ի №ՍԱ/34.4-Մ4-2/2823-19 գրության՝ նշված ուղղությամբ սահմանված կարգով ձևակերպված է բաժանորդ),

դ. «Սևան», «Հրազդան», «Երևանի ՀԷԿ-1» և «Քանաքեռ» հիդրոէլեկտրակայանների տարածքում սեփական կարիքների էլեկտրական ցանցից միացված այլ սպառողներ կամ սպառիչներ չեն հայտնաբերվել,

5) Հանձնաժողովը 2019 թվականի հոկտեմբերի 2-ի №ՍԱ/34.1-Մ2-6/2734-19 գրությամբ դիմել է «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն՝ խնդրելով հայտնել վերջինիս գնահատականը Ընկերության կողմից 2018 թվականի ապրիլի 17-ից մինչ գրության ներկայացման պահը որպես սեփական կարիք ներկայացված, սակայն «ԷՅ ՍԻ ԷՄ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի վերաբերյալ՝ հետևյալ բացվածքով.

ա. Ընկերության կողմից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունից գնված,

բ. Ընկերության կայաններում արտադրված,

6) նշված հարցի պարզաբանման, ինչպես նաև Ընկերությունում կատարված մոնիթորինգի արդյունքների ամփոփման նպատակով Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 2-րդ մասը, 10 օրով երկարաձգել է վարչական վարույթի ժամկետը,

7) «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը 2019 թվականի հոկտեմբերի 10-ի №01/214-19 և նոյեմբերի 25-ի №01/244-19 գրություններով ներկայացրել է 2018 թվականի ապրիլ-դեկտեմբեր և 2019 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում Կայանի 110կՎ հաղորդաձողից սնվող 110/10կՎ Տ-5 տրանսֆորմատորի (որի 10կՎ լարումից սնվող սեփական կարիքի 10/0,4կՎ ՍԿՏ-5 տրանսֆորմատորի 0,4կՎ լարումից սնվել է «ԱՅ ՍԻ ԷՄ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը) ծախսած էլեկտրաէներգիայի քանակի համեմատությունը 2016- 2017 թվականների համապատասխան ամիսներին նույն տրանսֆորմատորի ծախսած էլեկտրաէներգիայի քանակների հետ, ինչպես նաև ներկայացրել է 2018 թվականի ապրիլի 17-ից մինչև 2019 թվականի հոկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում Կայանի չաշխատած ժամերի և այդ ժամանակահատվածում հիշյալ տրանսֆորմատորի ծախսած էլեկտրաէներգիայի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ ամիսների,

8) Հանձնաժողովը, ելնելով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության անհրաժեշտությունից և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 2-րդ մասը, ևս 10 օրով երկարաձգել է վարչական վարույթի ժամկետը,

9) վարչական վարույթի շրջանակում Ընկերության կողմից «ԷՅ ՍԻ ԷՄ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն էլեկտրական էներգիայի տրամադրման արդյունքում էլեկտրաէներգետիկական համակարգին հասցված վնասը գնահատելու նպատակով Հանձնաժողովը 2019 թվականի հոկտեմբերի 28-ի №ԳԲ/34.1-Մ2-3/3101-19 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն՝ խնդրելով փոխօգնության կարգով հայտնել՝ արդյո՞ք Կայանում առկա հաշվառման սարքը տեղադրված է եղել միայն «ԷՅ ՍԻ ԷՄ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սպառած էլեկտրական էներգիան հաշվառելու

նպատակով և հաշվառման սարքի արձանագրած ցուցմունքը արտացոլում է արդյոք նշված ընկերության գործունեության ընթացքում արձանագրած սպառման ծավալները, ինչպես նաև հաշվառման սարքը լաբորատոր հետազոտության ներկայացված լինելու պարագայում տրամադրել տեղեկատվություն «ԷՅ ՍԻ ԷՄ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Կայանում իրականացված գործունեության ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի ծավալի վերաբերյալ՝ ըստ օրերի և ցերեկային (ժամը 06.00-ից մինչև 22.00-ն) ու գիշերային (ժամը 22.00-ից մինչև 06.00-ն) ժամերի: Հաշվի առնելով նշվածը և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 2-րդ մասը, Հանձնաժողովը 30 օրով երկարաձգել է վարչական վարույթի ժամկետը,

10) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտը 2019 թվականի նոյեմբերի 15-ի N8/5995 գրությամբ հայտնել է, որ Կայանի փակ բաշխիչ սարքավորումների տեղակայման սրահում տեղադրված էլեկտրաէներգիայի հաշվառման սարքը նախատեսված է եղել միայն «ԷՅ ՍԻ ԷՄ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սպառած էլեկտրական էներգիան հաշվառելու նպատակով, և հաշվառման սարքի արձանագրած ցուցմունքն արտացոլում է վերջինիս գործունեության ընթացքում արձանագրած սպառման ծավալները: Միաժամանակ, իրականացված ուսումնասիրությունների ընթացքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության աշխատակիցների կողմից գրանցվել են սպառողի էլեկտրական էներգիայի հաշվառքն իրականացնող №EA02RT-B-4 տիպի №01041414 էլեկտրոնային հաշվիչի հետևյալ ցուցմունքները՝ Total-21416, 422:T1-14318,604:T2-7097,820, հոսանքի տրանսֆորմատորների գործակից՝ k=80: Նշվել է, որ էլեկտրոնային հաշվիչով գրանցված էլեկտրական էներգիայի ամբողջ ծախսը /Total/ կազմել է 1 713 313.76 կՎտ.ժ, որից 1 145 488.32 կՎտ.ժ՝ ցերեկային սակագնով /T1/ և 567 826.6 կՎտ.ժ՝ գիշերային սակագնով,

11) Հանձնաժողովը 2019 թվականի նոյեմբերի 27-ի №ՍԱ/34.1-Մ2-3/3603-19 գրությամբ կրկին փոխօգնության կարգով դիմել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտ՝ խնդրելով հնարավորության դեպքում տրամադրել հավելյալ տեղեկատվություն էլեկտրաէներգիայի հաշվառման սարքի հիշողությունից արտածված էլեկտրական էներգիայի ամբողջ ծախսի վերաբերյալ՝ ըստ օրերի (դրանց բացակայության դեպքում՝ ըստ ամիսների) և ցերեկային (ժամը 06.00-ից մինչև 22.00-ն) ու գիշերային (ժամը 22.00-ից մինչև 06.00-ն) ժամերի բացվածքի: Հաշվի

առնելով նշված և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 2-րդ մասը՝ Հանձնաժողովը 30 օրով երկարաձգել է վարչական վարույթի ժամկետը,

12) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտը դեռևս չի պատասխանել Հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 27-ի №ՍԱ/34.1-Մ2-3/3603-19 գրությանը,

13) Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003 թվականի սեպտեմբերի 1-ի №50Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0108 լիցենզիայի (այսուհետ՝ №0108 լիցենզիա) պայմանների 9-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը էլեկտրական էներգիան կարող է օգտագործել սեփական կարիքների համար՝ միայն էլեկտրական էներգիայի արտադրության հետ կապված պահանջների բավարարման համար, եթե այլ բան սահմանված չէ շուկայի կանոններով կամ լիցենզավորված անձի հետ պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում կնքված գործարքով,

14) «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից նույն օրենքի դրույթները, հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, գործունեության լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կիրառելու նշված հոդվածով նախատեսված տուժանքներ,

15) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ՝

ա. Ընկերությունը խախտել է №0108 լիցենզիայի պայմանների 9-րդ կետի պահանջը՝ որպես սեփական կարիքների համար օգտագործված ներկայացնելով Կայանում 2018 թվականի ապրիլի 17-ից մինչև 2019 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում «ԷՅ ՍԻ ԷՄ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը մատակարարված էլեկտրական էներգիան, այն պարագայում, երբ Կայանում արտադրված էլեկտրական էներգիան կարող է օգտագործել սեփական կարիքների համար՝ միայն էլեկտրական էներգիայի արտադրության հետ կապված պահանջների բավարարման համար, և որևէ իրավական ակտով կամ Ընկերության հետ պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում կնքված գործարքով այլ բան նախատեսված չէ,

բ. Ընկերության կողմից №0108 լիցենզիայի պայմանների 9-րդ կետի խախտումը հանգեցրել է էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության, արդյունքում նաև՝ սպառողների օրինական շահերի խախտման: Մասնավորապես, Ընկերությունից պակաս առաքված էլեկտրական էներգիայի փոխարեն ավելի թանկ գնով էլեկտրական էներգիա գնելու հետևանքով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունում առաջացրել է շուրջ 23.28 միլիոն դրամի չափով լրացուցիչ ծախս, որը, համաձայն գործող կարգավորումների, ներառվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնում,

գ. «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածից ուղղակիորեն բխում է, որ լիցենզավորված անձի թույլ տված խախտման դեպքում կիրառվող պատասխանատվության տարր է նաև Հանձնաժողովի կողմից տվյալ խախտումը վերացնելուն ուղղված գործողություններ ձեռնարկելը, այսինքն՝ պատասխանատվության կիրառումն ունի նաև մինչև թույլ տրված խախտումն առկա վիճակի վերականգնման նպատակ՝ հաշվի առնելով այլ կարգավորվող սուբյեկտների և սպառողների խախտված իրավունքների վերականգնման օրինաչափ շահը, ինչն անմիջականորեն բխում է նշված սուբյեկտների շահերի հավասարակշռումն ապահովելու սկզբունքի բովանդակությունից:

Տվյալ դեպքում Ընկերության կողմից №0108 լիցենզիայի պայմանների 9-րդ կետի խախտման հետևանքով խախտվել են սպառողների օրինական շահերը՝ վերջիններիս զրկելով հիմնավորված սակագներով ծառայություններ ստանալու՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով ամրագրված սկզբունքով երաշխավորված իրավունքից: Այս պարագայում, մատուցված ծառայությունների դիմաց հիմնավորված սակագին վճարելու սպառողների իրավունքի իրացման երաշխավորման նպատակով, հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասը, անհրաժեշտ է վերացնել վերոնշյալ խախտումը՝ ապահովելով նշված գումարի վերադարձը սպառողներին՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից վերջիններիս մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագներում այն հաշվի առնելու միջոցով, ընդ որում, ելնելով նշված խախտման՝ հանրության (շուրջ մեկ միլիոն սպառողներ) շահերին ուղղակի առնչությունից, այդ թվում՝ վերջիններիս կողմից ավելի վճարված

գումարի՝ հնարավորինս սեղմ ժամկետում վերադարձի ապահովման անհրաժեշտությունից, սույն որոշման համապատասխան կետերի կատարումը անհրաժեշտ է համարել անհապաղ կատարման ենթակա, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. №0108 լիցենզիայի պայմանների 9-րդ կետի խախտման համար Ընկերությանը տուգանել 10.000.000 (տասը միլիոն) դրամ գումարի չափով:

2. «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կատարել 2018 թվականի ապրիլի 17-ից մինչև 2019 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում Կայանի աշխատանքի մեջ գտնվելու ընթացքում «ԷՅ ՍԻ ԷՄ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրման արդյունքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը պակաս առաքված էլեկտրական էներգիայի քանակի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունում առաջացրած լրացուցիչ ծախսի վերահաշվարկ և ներկայացնել Ընկերությանը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը և Հանձնաժողովին:

3. Ընկերությանը և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում սույն որոշման 2-րդ կետի համաձայն կատարված վերահաշվարկին համապատասխան՝ ապահովել համապատասխան գումարի վերադարձը և դրա ստացումը:

4. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

5. Սահմանել, որ սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերը ենթակա են անհապաղ կատարման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

7. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- դեկտեմբերի 2019թ.